ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA
EU4Business

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT
Implemented by: giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

European Commission

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՓՅՈՒՌՔԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄԱՐԻ ՍԿԼԱԴՈՎՍԿԱ-ԿՅՈՒՐԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՄԱՐԻ ՍԿԼԱԴՈՎՍԿԱ-ԿՅՈՒՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ (MSCA)

MSCA-Ը ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՄ 9-ՐԴ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ՝ «ՀՈՐԻԶՈՆ ԵՎՐՈՊԱ»-Ի ՄԱՍՆ Է:

Դոկտորական ցանցեր
Ակադեմիական և ոչ ակադեմիական կազմակերպություններում դոկտորանտների վերապատրաստման ծրագրերի իրականացմանն աջակցություն: Մանրամասների համար՝ Doctoral Networks.

Հետդոկտորական կրթաթոշակներ
Դոկտորական կոչում ունեցող գիտնականների կարիերայի հեռանկարների և գերազանցության հարցերում աջակցություն:

Անձնակազմի փոխանակումներ
Համագործակցության զարգացում՝ անձնակազմի փոխանակումների միջոցով: Մանրամասների համար՝ Staff Exchanges.

Համաֆինանսավորում
Տարածաշրջանային, ազգային և միջազգային ծրագրերի համաֆինանսավորում: Մանրամասների համար՝ COFUND.

MSCA և քաղաքացիներ
Հետազոտությունների ու գիտնականների և լայն հանրության միջև տարածության կրճատում: Մանրամասների համար՝ MSCA and Citizens.

MSCA ՀԵՏԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ (PF)

MSCA Հետդոկտորական կրթաթոշակների նպատակն է բարձրացնել PhD կոչում ունեցող այն գիտնականների ստեղծագործական և նորարարական ներուժը, ովքեր ցանկանում են ձեռք բերել նոր հմտություններ առաջադեմ վերապատրաստման, միջազգային, միջգիտակարգային և միջոլորտային շարժունակության միջոցով:

MSCA Հետդոկտորական կրթաթոշակները բաց են գերազանց գիտնականների համար՝ **անկախ ազգությունից**: Ծրագիրը նաև խրախուսում է գիտնականներին աշխատել ոչ ակադեմիական շրջանակի հետազոտական և ինովացիոն նախագծերի վրա և բաց է Եվրոպայում վերաինտեգրվել ցանկացող, հակամարտությունների հետևանքով տեղահանված, ինչպես նաև բարձր ներուժ ունեցող գիտնականների համար, ովքեր ձգտում են վերսկսել իրենց կարիերան հետազոտության մեջ:

Կրթաթոշակները տրամադրվում են գերազանց գիտնականներին, որոնք զբաղվում են միջազգային շարժունակությամբ՝ դեպի Եվրոպա (ԵՄ անդամ կամ «Հորիզոն Եվրոպա»-ին ասոցացված երկրներ), ինչպես նաև ոչ ասոցացված երրորդ երկրներ: Հայտերը համատեղ պատրաստվում են գիտաշխատողի և շահառուի կողմից՝ ակադեմիական կամ ոչ ակադեմիական հատվածում:

Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԴԻՄԵԼ

Շահագրգիռ գիտնականները դիմում են ներկայացնում հյուրընկալող կազմակերպության հետ միասին, որը կարող է լինել համալսարան, հետազոտական հաստատություն, բիզնես, ՓՄՁ կամ այլ կազմակերպություն՝ հիմնված ԵՄ անդամ կամ «Հորիզոն Եվրոպա»-ին ասոցացված երկրում:

Բոլոր գիտակարգերը բաց են Հետդոկտորական կրթաթոշակների համար՝ ներառյալ հետազոտական ոլորտները, որոնք ընդգրկված են Եվրատոմի հետազոտությունների և ուսուցման ծրագրում:

Գիտնականները, որոնք հետաքրքրված են հետդոկտորական կրթաթոշակներով՝

- պետք է ունենան PhD կոչում հայերի ընդունման վերջնաժամկետի պահին: Հայտատուները, ովքեր հաջողությամբ պաշտպանել են իրենց դոկտորական թեզը, բայց դեռ պաշտոնապես չեն ստացել դոկտորի կոչում, նույնպես կարող են դիմել,
- պետք է ունենան հետազոտության ոլորտում առավելագույնը ութ տարվա փորձ՝ PhD կոչում շնորհելու օրվանից, հետազոտությունից դուրս տարիների փորձը և կարիերայի ընդմիջումները չեն հաշվարկվում վերոնշյալ առավելագույն սահմանի մեջ, ինչպես նաև չեն հաշվարկվում երրորդ երկրներում հետազոտությունների տարիների փորձը՝ Եվրոպայում վերաինտեգրվել ցանկացող ԵՄ քաղաքացիների կամ ԵՄ անդամ կամ «Հորիզոն Եվրոպա»-ին ասոցացված երկրներում երկարաժամկետ բնակության իրավունք ունեցողների համար,
- պետք է համապատասխանեն շարժունակության կանոններին. չպետք է բնակված լինեն կամ իրենց հիմնական գործունեությունը (աշխատանք, ուսումնասիրություններ և այլն) իրականացրած լինեն հյուրընկալող կազմակերպության երկրում (Եվրոպական հետդոկտորական կրթաթոշակների համար), կամ արտագնա փուլում՝ ընդունող կազմակերպությունում (Գլոբալ հետդոկտորական կրթաթոշակների համար) ավելի քան 12 ամիս՝ 36 ամսվա ընթացքում՝ միցույթի վերջնաժամկետից անմիջապես առաջ:

Ի՞ՆՉ Է ՆԵՐԱՌՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

ԵՄ ֆինանսավորում ստացող շահառուն հետազոտողին պետք է համալրի կրթաթոշակի ամբողջ ժամանակահատվածի համար:
ԵՄ-ն աջակցություն է ցուցաբերում համալրված հետազոտողին՝ հետևյալ տեսքով

- ապրուստի նպաստ
- շարժունության նպաստ
- ընտանեկան, երկարաժամկետ արձակուրդի և հատուկ կարիքների նպաստներ, եթե կիրառելի է:

Ի լրումն, նախատեսվում է ֆինանսավորում հետևյալի համար՝

- հետազոտական, ուսուցողական և ցանցային գործունեություն,
- կառավարման և անուղղակի ծախսեր:

ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Գործում են հետդոկտորական կրթաթոշակների 2 տեսակ՝

1. **Եվրոպական հետդոկտորական կրթաթոշակներ**. Բաց են այն գիտնականների համար, ովքեր տեղափոխվում են Եվրոպայի ներսում կամ գալիս են Եվրոպա աշխարհի այլ մասերից՝ իրենց հետազոտական կարիերան շարունակելու համար: Այս կրթաթոշակները կատարվում են ԵՄ անդամ կամ «Հորիզոն Եվրոպա»-ին ասոցացված երկրում և կարող են տևել 1-ից 2 տարի: Ցանկացած ազգության գիտնական կարող է դիմել:
2. **Գլոբալ հետդոկտորական կրթաթոշակներ** Ֆինանսավորում են գիտնականների շարժունակությունը՝ Եվրոպայից դուրս: Կրթաթոշակը տևում է 2-ից 3 տարի, որից առաջին 1 կամ 2 տարին անցկացվում են ոչ ասոցացված երրորդ երկրում, ապա հաջորդում է 1 տարվա պարտադիր վերադարձ՝ ԵՄ անդամ կամ «Հորիզոն Եվրոպա»-ին ասոցացված երկրում հիմնված կազմակերպությանը: Դիմել կարող են միայն ԵՄ անդամ կամ «Հորիզոն Եվրոպա»-ին ասոցացված երկրների քաղաքացիները կամ երկարաժամկետ բնակության իրավունք ունեցողները:

Երկու տեսակի կրթաթոշակներն էլ կարող են ներառել նաև **կարճաժամկետ գործուղումներ**՝ աշխարհի ցանկացած վայր (բացառությամբ Գլոբալ կրթաթոշակի վերադարձի փուլից):

Ակադեմիական և ոչ ակադեմիական հատվածի միջև կամուրջներ կառուցելու նպատակով ՝ գիտնականները կարող են լրացուցիչ աջակցություն ստանալ ՝ **մինչև 6 ամիս ժամկետով տեղակայվել ոչ ակադեմիական կազմակերպությունում**, որը հիմնված է ԵՄ անդամ կամ «Հորիզոն Եվրոպա»-ին ասոցացված երկրում: Այս տեղակայումը պետք է տեղի ունենա նրանց կրթաթոշակի ավարտին:

ERA ԿՐԹԱԹՈՇԱԿ (ERA-PF)

MSCA Հետդոկտորական կրթաթոշակը շատ մրցունակ է, և ֆինանսավորվում են միայն լավագույն, գերազանց հայտերը: Այս առումով, սփյուռքահայ գիտնականների համար կա մեկ այլ փայլուն հնարավորություն՝ վերադառնալ Հայաստան և կատարել հետազոտական և ինովացիոն գործունեություն՝ ի շահ գիտնականների և Հայաստանի. այն է՝ ERA կրթաթոշակը (ERA-PF):

ERA PF

ERA-PF-ի նպատակը շարժունակությունն ու ուղեղների շրջանառությունն է՝ ընդլայնվող երկրներում: Նախագիծը բաց է PhD կոչում ունեցող **ցանկացած ազգության** անհատ գիտնականների համար, ովքեր ցանկանում են ներգրավվել գիտահետազոտական և նորարարական ծրագրերում՝ աշխարհի ցանկացած երկրից գալով ընդլայնվող երկիր կամ տեղափոխվելով Եվրոպայում՝ ընդլայնվող երկիր:

Նախագիծը ֆինանսավորում է MSCA-2021-PF մրցույթին ընդլայնվող երկրում գտնվող շահառուի հետ ներկայացված այն հայտերը, **որոնք չեն հավաքել բավականաչափ բարձր միավորներ այս մրցույթի շրջանակներում ֆինանսավորում ստանալու համար**: Միայն Եվրոպական հետդոկտորական կրթաթոշակները կարող են որակավորել ERA-PF մրցույթին (Գլոբալ հետդոկտորական կրթաթոշակները բացառվում են): Կիրառվում են MSCA-2021-PF մրցույթի համար կիրառելի մյուս բոլոր իրավունակության և ընդունելիության կանոնները:

Հայտատուները կարող են դիտարկվել ֆինանսավորման այս լրացուցիչ հնարավորության համար՝ դիմումի ձևում պատասխանելով «ԱՅՈ» հետևյալ հարցին՝ **«ցանկանու՞մ եք մասնակցել *ERA*-ի հետդոկտորական կրթաթոշակներին և դրանով իսկ մեծացնել ֆինանսավորման հնարավորությունները»**: Հայտատուները, ովքեր չեն պատասխանի կամ կնշեն «Ոչ» վերոնշյալ հարցին, չեն դիտարկվի ERA-PF մրցույթի համար (բայց կգնահատվեն MSCA-PF մրցույթի շրջանակում, եթե իրավասու են):

MSCA-PF-ի հետ համամատ իրականացման միակ տարբերությունն այն է, որ ERA կրթաթոշակների աջակցությամբ գիտնականները պաշտոնապես չեն դիտարկվի որպես MSCA-ի գործընկերներ:

MSCA PF ՄՐՑՈՒՅԹԻ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ

Բացման ամսաթիվ՝ հունիսի 22, 2021

Վերջնաժամկետ՝ հոկտեմբերի 12, 2021
17:00:00 Բրյուսելի ժամանակով

Լրացուցիչ տեղեկություններ մրցույթի և հայտի ներկայացման վերաբերյալ՝
HORIZON-MSCA-2021-PF-01

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ MSCA ՀԵՏԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԻՆ

ԲՈԼՈՐ ՇԱՀԱԳՐԳԻՌ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԿԱՊՎԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ MSCA ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ (ԱԿԱ)՝ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԳՏՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ՝

Անահիտ Խաչիկյան
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Միջազգային գիտական և տեխնոլոգիական ծրագրերի բաժին «Գիտական ծրագրերի ինտեգրմանն աջակցության կենտրոն» հիմնադրամ առաջատար փորձագետ, MSCA ԱԿԱ
(To:) anip@sci.am
00 374 10 52 54 32

Վարդուհի Մովսեսյան
ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի ԳԳԿՎ միջազգային համագործակցության բաժնի ավագ մասնագետ, MSCA ԱԿԱ
(Cc:) v.movsesyan@scs.am
00 374 95 14 26 31

ԱՎԵԼԻՆ...

հայտատուների շահագրգիռ խմբի համար ԵՄ-ն բիզնեսի համար նախաձեռնության «Նորարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագիրը կկազմակերպի տեղեկատվական օր՝ հայտերի ներկայացման մասին ավելի խորը պատկերացում կազմելու համար:

Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական Միության և Գերմանիայի դաշնային հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից և իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից՝ «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» ծրագրի հովանու ներքո: Ծրագիրը սկսվել է 2019 թվականի նոյեմբերին և կտևի մինչև 2023 թվականի ապրիլ: Ծրագիրը Եվրոպական Միության EU4Business նախաձեռնության մասն է:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Եվրոպա

«Հորիզոն Եվրոպա» ծրագրի համատեքստում Եվրոպան սահմանում է ԵՄ անդամ պետություններ և «Հորիզոն Եվրոպա» ծրագրին ասոցացված երկրներ (Հայաստանը 2016 թվականից ասոցացվել է ԵՄ «Հորիզոն 2020» ծրագրին և «Հորիզոն Եվրոպա» ծրագրին ասոցացումն ընթացքիմեջ է):

Ասոցացված երկրներ

Հետևյալ երկրները 2021 թվականի հուլիսի դրությամբ պաշտոնապես հետաքրքրություն են հայտնել «Հորիզոն Եվրոպա» ծրագրիին ասոցացվելու՝ Ալբանիա, Հայաստան, Բոսնիա և Հերցեգովինա, Կանադա, Ֆարերյան կղզիներ, Վրաստան, Իսլանդիա, Իսրայել, Կոսովո, Չեռնոգորիա, Մարոկկո, Հյուսիսային Մակեդոնիա, Նորվեգիա, Մոլդովայի Հանրապետություն, Սերբիայի Հանրապետություն, Շվեյցարիա, Թունիս, Թուրքիա, Ուկրաինա, Միացյալ Թագավորություն:

Երրորդ երկրներ

Բոլոր այն երկրները, որոնք ոչ ԵՄ անդամ են, ոչ էլ ասոցացված են «Հորիզոն Եվրոպա»-ին համարվում են երրորդ երկրներ:

Ընդլայնվող երկրներ

Անդամ պետություններ. Բուլղարիա, Խորվաթիա, Կիպրոս, Չեխիա, Էստոնիա, Հունգարիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովակիա և Սլովենիա:
Ասոցված երկրներ՝ (վավեր ասոցացման համաձայնագրերի առկայության պարագայում) Ալբանիա, Հայաստան, Բոսնիա և Հերցեգովինա, Ֆարերյան կղզիներ, Մակեդոնիայի նախկին Հարավսլավիայի Հանրապետություն, Վրաստան, Մոլդովա, Չեռնոգորիա, Սերբիա, Թունիս, Թուրքիա և Ուկրաինա:

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

Postdoctoral Fellowships
National Contact Points (NCPs)

Հյուրընկալման առաջարկների համար այցելեք ՝

Net4Mobility+ EURAXESS